

մեղքն ի Լով: Ձոր յետ ամի միոյ յետ յորով
 չարեացն՝ խորհեցաւ խորհուրդ չար վասն
 ազգիս Հայոց եւ վասն հաւատոյ սուրբ Լու-
 սաւորչին եւ սուրբ եկեղեցեացն մեր, հնարս
 իմացեալ գայս. ոմամբք համախոհիւք զնա-
 ցեալ առ Յեզուիրզան՝ երզմամբ խոստացաւ
 դառնալ ի հաւատս եւ ի կրօնս նոցա եւ լինել
 ախթարմայ. զոր յետ սակաւ աւուրց լիով
 կատարեալ գայն ի մէջ եկեղեցոջ առաջի բազ-
 մաց կարգաւորաց եւ իշխանաց: Ապա սկսաւ
 բազում չարիս եւ նենկութիւն եւ դաւ զործել
 ազգիս իմոյ՝ ունելով իւր օղնական դամենայն
 ազգն Լէհու, պարոնայքն, զիշխանս, զդա-
 տաւորս եւ դամենայն քահանայս եւ զկարգա-
 ւորս: Ապա սկսաւ անգոսնել, արհամարհել
 զհաւատն մեր՝ հերձուածող եւ բաժանող կո-
 չելով⁷ զՀայք: Յետոյ խլեալ եւ յափշտակեալ
 զեկեղեցիս եւ զվանորայս ի ձեռաց մերոց՝
 վիմաչէն, կամարակառ, սալարայարկ (^բ):
 Այլ եւ զքահանայս ցրուեաց, զոմանս հալա-
 ծելով, զայլս ի բանս եւ ի կապանս մատնե-
 լով, զկէսս շխթայս ածելով եւ զուղղա-
 փառան մատնելով, հարկանելով, տուգանե-
 լով եւ ազգ եւ ազգ զրզովելով:

Ապա սկսաւ վատնել եւ կորուսանել
 զինչս եւ զխաղինայս՝ զոսկեղէն եւ արծաթե-
 դէն անօթս, զմեծամեծ խաչան, պատվական
 եւ ոսկեղօծ ըսկիս, ծանրաչէն բուռվառան,
 մեծազին քոցան եւ արծաթի խնկատուպիսն,

⁷ կոչէ: